Փողով ներկայացումներ և կինո-
ներ դնելու միջոցով ակումբը մի-
ջոցներ հայթայթելու գործիք դար-
ձնելը-ակումբային աշխատանքի ցա-
վոտ հարցն ե: Պատահում ե, վոր շաբաթվա 4.5 որը
ակումբներում բռնված ելինում վճարովի կինոյով (մանա-
վանդ Մոսկվայի ակումբներում) կամ ներկայացում-
երով, վոր բոլորովին անթույլատրելի յե: Կինոյի և
ներկայացման վրա պիտի նայվի դաստիարակչական
և ժամանցի տեսակետից և վոչ թե միջոցներ հայ-
թայթելու տեսակետից: Վարձով կինո կամ ներկայացում
պիտի զրվեն միմիայն ծայրահեղ դեպքում և այն ել մի-
այն բարձր կուլտ-մարմինների թույլտվությամբ: Մատ-
նանշված չարիքի դեմ ընկերները վճռականորեն կովելու
յեն տեղերում:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՆ-
ՑԱՂ ՄԻՔ ԱՇԽԱ-

ՏԻ ՄՏԵՂԾԵԼ

Թե ինչ ազդեցություն ե անուս
ՅԱՂ ՄԻՔ ԱՇԽԱ-
ԿՈՒՄԲԸ բանվորական կենցաղի
վրա, մինչև որս ել դեռ այդ հարցը
բոլորովին պարզ չե շատ աշխատավոր-
ների համար: Շատերը կարծում են, թե արհեստականո-
րեն կարելի յե կենցաղ ստեղծել բավական ե այս կամ
միջոցները ձեռք առնել՝ և կոմունիստական կենցաղը պատ-
րաստ ե: Այդ պատճառով ել մենք հաճախ տեսնում ենք,
թե ինչպես առանց որևէ չափի և զգացման անվերջ հոկ-
տեմբերյաններ են կազմակերպվում կամ կարմիր հարսա-
նիքներ և այդ աշխատանքով ի չիք են դարձնում վոչ
միայն այդ հարցերի մոտեցման լրջությունը, այլ և քանդ-
վում ե ամբողջ դաստիարակչական և քաղաքական աշ-
խատանքը: Նույնը պիտի ասել և հակակրոնական պրոպա-
գանդայի վերաբերյալ: յեթե ընկերները կարծում են, թե
բավական ե, վոր մի պիյտս դնեն, վորի մեջ կոմյերիտա-
կանները ծեծում են տերտերներին, կամ թե չե՞ն կարեն

մի պլակատ տարբեր կրոնների աստվածների այլանդակ-
նկարներով և հարցը լուծված ե: Մի քանի ընկերներ նույն-
իսկ փորձում են ստեղծել նոր կենցաղի խմբակներ,
մշակել նոր կյանքի պլան, ընկնելով նույնիսկ ծիծաղելի-
անհեթեթությունների մեջ: Այսպես որինակ, Արհմիու-
թյունների Մոսկվայի նահանգական Խորհրդի Պալատի-
բյուրոյի վարչությունը, մեզ մոտ, Մոսկվայում չնայած
VII համագումարի ցուցմունքներին, թե կենցաղի հարցե-
րին շատ զգուշությամբ պիտի մոտենալ, պիտի վերցնել
բանվորին այնպես, ինչպես կա և աշխատել նրա վրա ազ-
դելու ակումբային աշխատանքի ամբողջ միջավայրով,
չնայած այս բոլորին, այնուամենայնիվ հատուկ:
բյուլետեններով խորհուրդներ ե տալիս, թե ինչպես պի-
տի ստեղծել այդ նոր կյանքը:

Ի՞նչպես ե այդ նոր կյանքը հասկացվում: Գրում
են մանրամասն, թե բանվորն ինչ և ինչպես պիտի անի
«Առավոտյան ժամի 7.ը անց 25 րոպե անկողնուց
վեր կենալ 10 րոպե հազնվելու և լվացվելու համար.
10 րոպե թեյի և 5 րոպե հանգստի. 10 րոպե ձեռնարկու-
թյուն գնալու համար, ժամի 8 ից մինչև 12 ը աշխա-
տանք գործարանում, ժամի 12.ից կեսօրյա (ճաշի) դա-
դար. ճաշել տանը և 20 րոպե պառկել, ժամը 12.ն անց
50 րոպե տանից դուրս գալ, իսկ ժամը 1-ից մինչև 5.ը
աշխատանք գործարանում, 10 րոպե տուն վերադառնա-
յու համար, ժամը 5.ն անց 10 րոպե. թեյ և հաց (20
րոպե ուտելու համար), ժամի 5 և 20 րոպեյից մինչև
6 ը հանդիսա պառկել, մինչև 6 և կեսը զբաղվել յերե-
խանների հետ. 6¹/₂-ից մինչև 7¹/₂-ը զբոսանք բաց ողում,
ժամը 7¹/₂-ից մինչև 10,15 ը. Պալատում (շաբաթը չորս
անգամ): Որերի բաշխումն ասում ե, վոր՝ «յերկուշաբթի
ակումբում, ժամը 7¹/₂-ից մինչև 8 ը ընթերցարանում,
8-ից մինչև 10 ը՝ աշխատանքի արտադրողականության
բարձրացման խմբակում. ժամի 10-ից մինչև քնելը՝

«մՏԵՐԻ փոխանակարգութ կեզ»։ Կնոջ հետմաքերի փոխանակություն նշանակվում է և յերեքշաբթի ու հինգշաբթի որերը, իսկ շաբաթ որը «ժամը 8 ից մինչև 10-ը կոնցերտ, կնոջ հետ՝ մինչև ժամը 10^{1/2} և ժամի 11 ից՝ քնել»։ Կիրակի որերը ժամի 9^{1/2}-ից զբոսանք յերեխաների հետ, յերեկոյան ընտանիքի հետ—թատրոն կամ կինո և այլն։

Բյուլետենը նույն իսկ փորձում է ցույց տալ բանվորներին ամենորվա ճաշացուցակը։ «յերկուշաբթի՝ փրշրած գետնախնձորով և ամեն տեսակ կանաչեղինով սուպ, կանաչեղենը քցվում է ըստ ցանկության, յերկորդ տեսակը ուսումնական յուղով տապակած գետնախնձոր։ պասուց յուղով և ալյուրով խաշած գետնախնձոր» և այլն և այլն և այսպես ամեն որ։ Մի խոսքով բանվորական կյանքի դասաբաշխումը բյուլետենով թելազրվում է ի վերուստ մի այնպիսի կոմիքական լրջությամբ և բյուրոկատական ինքնավստահությամբ, վոր բանվորներն իրավացի կը լինեն, յեթե նման ցուցմունքներն ընդունեն ծաղը ու ծանակով և ասեն, վոր ըստ յերեկութին նոր կենցաղի «խորհրդատուն» ինքը, յերեք բանվորական միջավայրում չի յեղել և նրա կյանքի հանգանանքների հետ բնավ ծանոթ չե։

ՏՆՏԵՍԵԼԻՔ ՄԻ. Ակումբային աշխատանքի պակածոցներ ԱԿՈՒՄ- սություններն ու թերությունները ԲԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ շատ ընկերներ աշխատում են բացարել միջոցների բացակայությանը ԴԵՐԻ ՀԱՄԱՐ թանը։ Դա մասամբ ճիշտ է, բայց միայն մասամբ։

Պիտի հիշել, թե ինչպես ցարական ժամանակներում արհեստակցական միությունները գրոշներով կարողանում են կաղմակերպել իրենց ակումբները, հենվելով գլխավորապես բանվորների ինքնագործունեյության վրա։ Մենք ել պետք և անտեսենք ամեն մի կոպեկը, աշխա-

տենք այն բոլորը, ինչ վոր հնարավոր ե անել սեփական ձեռներով և հիշենք, թե միջոցների մասին ինչ ե ասել համամիութենական VI համագումարը։ «Լավագույն ակումբը միայն նա չե, վոր ավելի լրիվ կերպով հօգում ե իր տնդամների կարիքն ու պահանջները, այլ նա, վոր այդ բոլորը կատարում ե բանվորական միջոցների ամենամիշ ծախսումով։

Ճիշտ է, յերբեմն միությունական բարձր մարմինները ձեռնարկություններից ստանալով հատկացումներ կուլտ-աշխատանքների համար, այդ միջոցները պահում են իրենց մոտ, իսկ ձեռնարկությունը կամ մի խումբ ձեռնարկություններն սպասարկող ակումբին տալիս են գրողներ։ Այդ բանի դեմ պիտի կռվել, հենվելով VI համագումարի վորոշումների վրա, վոր իբրև կանոն վորոշել ե կույտ միջոցների մեծ մասը պիտի ծախսել այն ձեռնառկությունների վրա, վարոնցից այդ միջոցներն սացվում են։ Ակումբային աշխատավորները պետք է պաշտպանեն այդ վորոշումը և տեղական միությունական և միջմիությունական խորհրդակցությունների, կոնֆերենցիաների և համագումարների միջոցով աստիճանաբար կյանքի մեջ անցկացնեն։

Պետք է մատնանշել նույնպես, վոր տեղերում յերբեմն ակումբի Փինանսավորման հարցում կոպիտ սխալ են գործում։ Այսպես հաճախ պատճենում են դեպքեր, յերբ ակումբը նախահաշվով չի ապրում, այլ պատճահական միջոցներով, վոր հայթայթում ե ներկայացումներից, կինոյից, այս կամ այն կարիքների համար բանվորներից հավաքած փողով և այլն։ Մրան զուգընթաց գործարկոմները ձեռնարկությունից կուլտ աշխատանքի համար ստացած միջոցները ($1^0/0$) ծախսում ե ակումբի վրա առանց այն ակումբի նախահաշվի մեջ մտցնելու։ Այսպիսով վոր ակումբի վարչությունը, վոչ գործարկումը, վոչ ել կուլտանձնաժողովը ճիշտ կերպով չգիտեն ակումբի ծախսերը

և միջոցները ծախսում են ինչպես վոր պատահի։ Յերշեմն ել պատահում ե, վոր կուլտ-հանձնաժողովը խառնվում ե միջոցների անմիջական ծախսելուն, վոր արդեն նախահաշվով հաստատված են, և բեկանում ե ակումբի վարչության վորոշումները, վոր ի հարկե յերբեք տեղի չպիտի ունենա և թույլատրելի չե։ Բացի սրանից, պիտի մատնանշել, վոր կուլտ աշխատանքի վրա միջոցները ծախսելիս առյուծի բաժինն ($40-50\%$ -ը) ընկնում ե նորից շատամներ պահելու և վարձու աշխատավորների վրա և բոլորը մոռանում են VI համագումարի վորոշումն արև մասին, թե այդ հարցումն ել պիտի անցնել ինքնապասարկման և շտատների աստիճանական կրծատման խմբակավարներ և ղեկավարներ պիտի առաջ քաշել ակումբի ակտիվի միջից։

ԶԿԱՆ «ԱՎԵԼՈՐԴ»
ԱԿՈՒՄԲՆԵՐ, ԿԱՆ
ԼԱՎ, ՅԵՎ, ՎԱՏ
ԱԿՈՒՄԲՆԵՐ

Տեղերից յեկած ընկերներն ինձ
շատ անգամ հարցը ել են. կարելի
յե արդյոք փակել մի որևէ միու-
թյան ակումբը, յեթե տվյալ տեր-
ըիտորիայում կան ուրիշ միություն-

ների մի քանի ակումբներ։ Ավելի լավ չե արդյոք բոլոր ակումբները ձուլել ի մի, միացնել և այդպիսով տնտեսել և միջոցները, և ույժերը, նման մոտեցումը բոլորովին սխալ ե և միայն ապացուցում ե, թե գեռես վորքան մենք բյուրոկրատորնեն են մոտենում գործին և չենք գնահատում մեր ստորին կուլտ-կրթական բջիջները՝ ակումբները։

Հարցը պետք ե այլ կերպ դնել. ակումբը իր անդամների կարիքներին ծառայում ե արդյոք և նրանք ակտիվ աշխատանք տանում են, թե վոչ։

Յերե վորեվե սիության ակումբ լավ է աշխատում եվ միացնում, իամախմլում ե միաւթյան անդամների մասսան, յերե ակումբը կենսութակ ե, ապա այդպիսի ակումբը չպետք է փակել, յերե նույնիսկ միեվնույն փողոցի վրա տարբեր միությունների յերկու լավ աշխատող ակումբներ լինեն։

Միությունական ակումբների միացման հարցին շատ զգույշ պիտի մոտենալ և պետք ե միացնել միայն ծայրահեղ դեպքերում, վորովհետև փորձը ցույց ե տվել, վոր յերբեմն տարբեր արտադրությունների անդամներ, շնորհիվ իրենց զարգացման պայմանների և արտադրության պայմանների միշտ ել չեն կարողանում իրար հետ լավ աշխատել (խորաշխատավորները և կոմունալնիկները, մետաղագործներն ու բժշկա-սանիտարականները և այլն)։

Դժբախտաբար, գործնական կյանքում յերբեմն և կենսունակ ակումբներն են փակվում (մանավանդ խորաշխատավորներինը), և միայն մոտ որերս յես լսեցի, վոր քաղաքներից մեկում, կարծեմ կաստրումայում, միտք կա փակելու կոմունալնիկների ակումբն այն պատճառով, վոր այդ շենքն անհրաժեշտ ե... յեկվորների համար հյուրանոց դարձնել. Դեպի ակումբն յեղս այդ տեսակ մոտեցման դեմ անհրաժեշտ ե կովել։

ԲԱՐՁՐԱՑՐԵՔ Ա-
ԿՈՒՄԲԻ ՏՈՄԾԻ
ՀԵՂԻՆԱԿՈՒ-
ԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐ-

Անհրաժեշտ ե մի քանի խոսք ակումբի ՏՈՄԾԻ ասել նաև ակումբի անդամության ՀԵՂԻՆԱԿՈՒ- և ակումբային տոմսի մասին։ Ակում- թյունն ՈՒ ՎԱՐ- ի բային տոմսի հեղինակությունը դեռ կա այնքան բարձր չե, բայց ակներև ե, վոր այդ կամրանա և կը բարձրանա հաստրակալայնության աճման և ակումբային մասսայի ակտիվության արթնացման հետ։ Ակումբին պիտի մոտենալ նույն լըր- ջությամբ, ինչպես մոտենում ենք բանվորական մի այլ կազմակերպության, ինչպես ամեն մեկն իր արհեստական միության։

Ակումբի տոմսը նույն հարգանքը պիտի վայելի, ինչ
վոր աշհեսակցական միության տօմսը:

Այժմ դեռ դա չկա և մենք ականստես ենք այնպի-
սի գեղքերի, յերբ բանվորն իր ակումբի տոմսը տալիս
է իր ծ. տարեկան տղային, վորպեսզի նա այդ տոմսով
ակումբ գնա: Պետք ե այնպես անել, վոր տոմսով ոգ-
տվի միայն նա, ով այդ տոմսն ունենալու իրավունք
ունի, վոր բանվորը գնահատի այդ տոմսը, այսինքն՝
ակումբ ինքը գնա և վոչ թե ուղարկի իր յերեխային,
իսկ դրա համար հարկավոր ե, վոր ակումբային խնդիրներն
ավելի հաճախ ժողովրդականացվեն և ակումբի անդամ-
ների ընդհանուր ժողովներում քննության դրվի ա-
կումբային աշխատանքի ծրագիրը:

Հարկավոր ե ավելի հաճախ հրավիրել ակումբի ակ-
տիվը և գումարել նրան այն ժամանակ, յերբ նա ազատ
ե, և վոչ թե այն ժամանակ, յերբ գործով զբաղված ե
և այդ ժողովներին հաճախել չե կարող:

ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի վերջո անհրաժեշտ ե կանգ առնել կարմիր ան-
կյունների վրա:

Ցես արդեն հիշեցի, վոր նրանք հսկայական չափե-
րով աճել են և կազմակերպվել համբարություններում,
հանրակացարաններում, ճաշարաններում, գրադարաննե-
րում և այն:

Մենք պետք ե հիշատակենք ակումբների և կուտ-
հանձնաժողովների միջև ծագաց վեճերը այն մասին, թե
ով պիտի ղեկավարի կարմիր անկյունները:

Պետք ե ասել, վոր կարմիր անկյունները թեև հան-
դիսանում են իրեւ ակումբների բջիջներ, այնուամենայ-
նիվ ղեկավարվում են վոչ թե ակումբի, այլ գործարկո-
մին կից կուտհանձնաժողովների կողմից, Զպիտի մոռա-

նալ, վոր կարմիր անկյունները ակումբի նման ինքնու-
ժույն կազմակերպություններ չեն և կամավոր անդամա-
գրություն չունին: Կարմիր անկյունը միությունական
հիմնարկություն ե, վորի միջոցով տարվում ե տարրական
քաղլուս աշխատանք (լրագրի, գրքի և խմբակներում խո-
րացրած մշակման վրոշ անսակների միջոցով):

Վորովինեակ անկյունների աշխատանքը նվազագույն
միջոցներ ե պահանջում, ուստի ևնա բավականին տար-
բերվելու յե ակումբային աշխատանքից:

Կարմիր անկյունում առաջին տեղը բոնելու յե լրա-
գրական աշխատանքը՝ բարձրածայն ընթերցանությունը,
պատի լրագիրը և դասախոսություն-զրույցների ամենա-
հասարակ տեսակենրը՝ յեթե հնարավոր ե մոգական լապ-
տերի ուղեկցությամբ:

Լիովին նպատակահարմար ե, վոր կարմիր անկյան
կից կազմակերպվի ինքնազարգացման խմբակներ, քաղ-
գրագիտության և արհշարժման ուսումնասիրության խըմ-
բակներ՝ խորացրած աշխատանքով: Բայց բոլորովին սիալ
ե, յեթի ձգտում են կարմիր անկյունը դարձնել վատ-
ակումբ՝ կազմակերպելով այնտեղ յերգեցիկ, յերաժշտա-
կան, գեղարվեստական, դրամատիկ և այլ խմբակներ:

Այդպիսի կազմակերպությամբ կարմիր անկյունը
դառնում ե վատ ակումբ, և գեղարվեստական խմբակ-
ները կանոնավոր զարգացման հնրարավորություն չունե-
նալով դուրս են մղում կարմիր անկյան ամբողջ քաղա-
քական—լուսավորչական աշխատանքը և փոխարենը չեն
առալիս վոչ մի կուլտուրական հանգիստ և ժամանց:

Այդ պատճենով ել անհրաժեշտ ե, վորպեսզի խմբա-
կային գեղարվեստական աշխատանքը կենտրոնանա ա-
կումբում: Ցեթե կարմիր անկյունը հեռու յե ակումբից
ե, այդ պատճենով, բանվորները ակումբ հաճախել չեն
կարող, ապա բացառիկ ղեղքում կարելի յե թույլ տալ,
վոր կարմիր անկյունում կազմակերպվեն հանդստի յերե-

նել չի կարող: Այդ աշխատանքին են վերաբերում գործարանում անգրագիտության և կիսագրագիտության վերացումը, կազմակերպում զանազան յերեկոյսն դասընթացքների՝ վորակի բարձրացման համար, ընդհանուր կերպով հետեւ ակումբային աշխատանքներին, I և II^o դրագոցների կազմի լրացում, պրոլետարական յերիտասարդության գործուղում բանֆակ և բարձրագույն դպրոցներ, գործարանային դպրոցի աշխատանքներին:

Յես շեշտուժ եմ, վոր ակումբային աշխատանքներին հետեւը կրելու յե ընդհանուր բնավորություն, այսինքն, պիտի ոժանդակել ակումբ կազմակերպելու աշխատանքներին, գրավել ակումբի մեջ կամավոր անդամագրության հիմունքներով բանվորներին և բանվորուհիներին և այնուայց կուլտ-հանձնաժողովների վոչ մի դեպքում չպետք ե խոռնելի ընթացիկ ակումբային աշխատանքներին և անմիջապես ղեկավարի, բեկանելով ակումբային վարչության կարգադրությունները և այն: Զպետք ե մոռանալ, վոր ակումբային վարչությունը ընտրովի մարմին ե, վորը պատասխանատու յե ինչպես գործարկում առաջ, նույնպես և ակումբի անդամների ընդհանուր ժողովի առաջ, վորոնք այնտեղ աշխատում են կամավոր հիմունքներով:

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՆ ՀԱՐՑԵՐԸ

Ակումբային աշխատանքի քաղաքական-լուսավորչական բովանդակությունը իր հիմնական գծերով կարելի յե յերեք տեսակի բաժանել. Լենինիզմի պրոպագանդ արհշարժման պրոպագանդ և արտադրական լուսավորության պրոպագանդա:

Լենինիզմի պրոպագանդան ակումբներում տարկում ե քաղղրագիտության խմբակների, Լենինյան խմբակների, Լենինյան անկյան միջոցով, զրույցի, զեկուցման, կենդանի

կոներ բանվորական յերգեցիկ խմբով կամ կենդանի լրագրով: Կարմիր անկյուններում վոչ մի դեպքում չպիտի թույլ տալ դրամատիկ խմբակների գոյությունը: Կարմիր անկյունների համար միջոցներ պիտի բաց թողնել նախահաշվային կարգով այն գւմարներից, վոր մի ությունը ստանում ե ձեռնարկություններից կուլտ աշխատանքների համար:

ԿՈՒԼՏ-ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՅԵՎ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՆՐԱՆՑ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Ակումբային աշխատանքի համար հսկայական նշանակություն ունեն նաև ակումբային վարչությունների և գործարկություններին կուլտ-հանձնաժողովներին կից կուլտ-հանձնաժողովների ճիշտ փոխհարաբերությունները:

Չնայած նրան, վոր արհեստակցական միությունների VI համագումարը պարզ և վորոշ կերպով ասաց, վոր կուլտ-հանձնաժողովները պահելու անհրաժեշտ ե և վոր նրանց չպետք ե կապել ակումբային վարչությունների հետ, այսուամենայնիվ կուլտ հանձնաժողովների հետ շարունակում են տեղի ունենալ թյուրիմացություններ: Այդ թյուրիմացությունները կարելի յե բաժանել յերկու մասի. 1) ձգտումն ձուլելու կուլտ հանձնաժողովները ակումբային վարչությունների հետ և 2) կուլտ-հանձնաժողովների խառնվելը ակուրային վարչությունների անմիջական աշխատանքների մեջ: Այդ յերկու անկանոնություններն եւ պիտի ուղել:

Չեռնարկություններում կուլտ-հանձնաժողովները գործարկումի մարմինն են, նրանց չեն ընտրում, այլ նշանակում են: Նրանց խնդիրն ե՝ միության կուլտ-աշխատանքի մեջ քաշել բանվորների և աշխատավորների նոր և նոր խավեր, վորոնք հետաքրքրվում են կուլտ-աշխատանքներով: Կուլտ-հանձնաժողովներն այնպիսի աշխատարքներ են տանում, վոր ակումբն անմիջականորեն տա-

լրագի, ինսցենիրովկայի ձեռվ և այլն։ Լենինիզմի պրոպագանդան պետք ե սիստեմատիկ և խորացած բը-նույթ կրի, մասնավանդ այն որերին, յերբ այս կամ այն քաղաքական կամպանիան ե անցկացվում։ Բոլոր այդ կանոնադաշտը հունվարի 9-ը, Փարիզի կոմունայի որը, ժայիսի 1 ը, աշխատավորունու որը, կարմիր բանակի և այլն, դրանք բոլորը պետք ե տոգորված լինեն Լենիզմով և պիտի շեշտվեն այդ ասպարիզում արած նվաճում-ները։ Լենինիզմի պրոպագանդայում վոչ մի շաբան չպի-տի լինի և, նայած տեղական պայմաններին, ունկնդիր-ների մակարդակին և այլն, այդ պրոպագանդան պետք ե կերպարանափոխվի և ստանա այս կամ այն ձեւը։ Սակայն պիտի ասել, վոր ընդհանրապես Լենինիզմի պրո-պագանդայի հարցը գեռնս լիովին պարզ չեւ ինչ կը նը-շանակե պրոպագանդ անել Լենինիզմը. պատմել, թե ինչպես ե ապրել Վլադիմիր Իլիչը և ինչ ե զրել, թե խոսել բանվորական շարժման պատմության մասին և այսին թե ինչու ալդ շարժումն այսպես զարդացավ այն մասին թե ինչու ալդ շարժումն այսպես զարդացավ վոչ ուրիշ կերպ։ Յես կարծում եմ, վոր ուսումնասիրել և լենինիզմը, կը նշանակե վոչ միայն ուսումնասիրել բան-վորական շարժման անցյալը, այլ և ուսումնասիրել մեր ժամանակակից կյանքը և հեղափոխությունը՝ հեղափո-խության շարժիչ ուժերի մասին Մարքսի և Լենինի ուսու-մունքի տեսակետից։ Բանվորները միայն այն ժամանակ կը մըռնեն Լենինիզմը, յերբ կը հասկնան պրոլետարիատի գերը կապիտալիստական հասարակության դեմ մղած դերը կապիտալիստական կովում և պրոլետարիատի ավանդաբղի, աղատագլուական կովում և պրոլետարիատի ավանդաբղի, քաղաքական կուսակցության, Լենինի կուսակցության քաղաքական կուսակցության դերը, Յեվ ի՞նարկե սիալ բոլիկիների կուսակցության դերը, Յեվ ի՞նարկե սիալ կիներ, յեթե մենք Լենինիզմի պրոպագանդայի մեջ կիներ, յեթե մենք Լենինիզմի պրոպագանդայի միայն փաստեր սահմանափակվելինք Լենինի կյանքից միայն փաստեր տալով, առանց կապելու այդ փաստերը այն դարձրջանի տալով,

հետ, յերբ նրանք տեղի յեն ունեցել և առանց ցույց տալու այն ազգեցությունը, վոր նրանք գործել են պրո-լեռարիատի ազատազրական դասակարգային պայքարի զարգացման վրա ամբողջ աշխար' ում,

Արհշարժման պրոպագանդան ել տարվում ե արհես-տակցական շարժումն ուսումնասիրող խմբակների և մաս-սայական ակումբային աշխատանքի միջոցով՝ զեկուցում ների, դասախոսությունների և այլն։ Արհշարժման ու-սումնասիրությունն անհրաժեշտ ե արհեստական միությունների համար ակտիվ աշխատավորներ նախա-պատրաստելու համար։ Միության շարքային անդամները պիտի իմանան միությունների հիմնական խնդիրները, իրենց իրավունքներն ու պարտականությունները։ Անցկացվող կամպանիաներում անհրաժեշտ ե մասսայականացնել և միության նշանակությունը, և նրա նվաճումներն այս կամ այն ասպարիզում (բանվորների տնտեսական շահերի պաշտպանություն, աշխատավարձի աճում, աշխատան-քի պաշտպանություն, աշխատանքի արտադրողականու-թյան աճում, միության դերը տնտեսության կազմա-կերպման մեջ և այլն)։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ.

ԹՅՈՒՆԸ ՎՃՌԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե ՍՏԱՆՈՒՄ

Արտադրական դաստիարակու-

թյունը, աշխատանքի արտադրողա-

թՅՈՒՆԸ ՎՃՌԱԿԱՆ

ԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՄԱՆ ԿԱՄՊԱՆ-

ՅԱՅԻ ՀՆՈՐԻԿՎ ՍՏԱՆՈՒՄ Ե ՎՃՈՎԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ։ Արտադրական գաս-

տիարակությունը հարվածային բը-

նույթ չպիտի կը գա «կամպանիա» չի, այլ յերկարա-
տե սիստեմատիկ և համառ աշխատանք։

Վորոնք են այդ արտադրական դաստիարակության ձեւերը։

Աշխատանքի մասսայական ձեւերին պիտի վերաբե-
կ են ակումբում տեղի ունեցող արտադրական թեմանե-

րով գեկուցումները, զբույցները, դասախոսությունները՝ գնահական պիտույքներով, դիագրամներով և նկարներով, արտադրական կինոլենտերի ցուցադրումը, կենդանի լրագիրը, վոր նվիրված կը լինի գործարանում տեղի ունեցած այս կան այն արտադրական գեպքին, պատի լրագիրը, վոր ծրագրված կերպով պըռպագանդ կը մղի աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, արտադրական թեմայով ինսցենիրովկան և այլն:

Յույց տված աշխատանքի մեջ առանձնահատուկ նշանակություն կունենան գործարանային արտադրական խորհրդակցությունները: Արտադրությունը ուսումնասիրող իր խորակների սիջոցով, ակումբը ակտիվ կերպով նախապատրաստվելու յե այդ արտադրական խորհրդակցություններին՝ հավաքելու յե թվեր, վիճաբանություններին մասնակցելու համար առաջ ե քաշելու խոսողներ, կազմելու յե դիագրամներ և այլն:

Ակումբին կից արտադրական ցուցահանդեսներ կազմակերպելը, եքսկուրսիաները գեպի իր և ուրիշ գործարանները նույնպես վորոշ տեղ են զրավելու արտադրական դաստիարակության սիստեմի մեջ: Անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել նաև գործարանային դպրոցների վրա, վորոնց վիճակի մասին համապատասխան զեկուցումներ պիտի դրվեն ակումբային ժողովում կամ արտադրական խորհրդակցության մեջ, ինչպես նաև գործարկում նիստերում:

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱ-
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՑՈՒՄԸ ԱՇ-
ԽԱՏԱՆՔԻ ԻՆՏԵՆ-
ՍԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐ-
ՁՐԱՑՄԱՆ ՆԱԽԱ-

Բանվորների և աշխատավորու-
հիների անգրագիտությունն ու կի-
սագրադիտությունը նույնպես պի-
տի կապել աշխատանքի արտադրո-
ղականության բարձրացման հետ,
բացարելով, թե անգրագետ բան-
վորն ու աշխատավորուհին չեն կարող

ԴՐՅՑԱԼՆ Ե. լինել լավ, վորակյալ բանվորներ և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել չեն կարող: Գործարանային դպրոցով չընդգրկած բանվորի, և առաջին հերթին աշխատավորուհու ու գեռահասի, վորակի բարձրացումը պիտի տարվի վորակի բարձրացման խմբակի սիջոցով և հատուկ պըռփակների աշխատանքի արդիության գասընթացքներով, վորակի սովորեցնելու յեն այն առարկաները, վոր կապված են այս կամ այն վորակի (Կվալիֆիկացիա) բարձրացման հետ, ինչպես որինակ, մաթեմատիկա, գծագրություն, ֆիզիկա, մեխանիկա, ելեկտրոտեխնիկա և այլն: Այդ բոլորի վրա ակումբը լուրջ ուշադրություն ե դարձնելու:

Ակումբին կից անհրաժեշտ ե կազմակերպել գործնական (прикладные) գիտելիքների խմբակ, վորտեղ սիրով կը հաճախեն կին-աշխատավորուհիները, յերիտասարդ բանվորը և անչափհասները (կաը ու ձեի խմբակ, աշադագործական արհեստ ուսումնասիրողների, կազմարության և այլն):

Ակումբային աշխատաքի ամբողջ գումարը պիտի քննել այն տեսակետից, թե նպաստում ե նա արդյոք գործարանի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, թե կասեցնում ե նրա աճումը:

Մենք գործնականում հանդիպում ենք այնպիսի որինակների, յերբ յերբեմն ակումբն իր աշխատանքի դասավորումով չի նպաստում նորմալ արտադրական աշխատանքին. դա լինում է այն գեպքում, յերբ ակումբն իր աշխատանքը վերջացնում է գիշերվա ժամի 2.3.ին, ի հարկե ակումբային աշխատանքն այդպես ուշ վերջացնելուց հետո բանվորի համար շատ դժվար և ծանր ե առավատյան վաղ իր աշխատանքն սկսելը: Այդ հարցը պետք է կարգավորել արտադրության շահերի տեսակետից:

ԱԿՈՒՄԲԻ ԶԱՐ-
ԴԱՐՈՒՄԸ, ԿԱՐՔ
ՈՒ ՍԱՐՔԸ ՊԵՏՔ
Ե ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԲՆՈՒՅՑԹ ԿՐԻ:

Ակումբը զարդարելու հարցն ել
մասամբ կապված ե աշխատանքի
արտադրողականության հարցի հետ:
Ակումբի զարդարումը պիտի
կըի այն արտադրության և միու-
բնույցթ կրի: թյան բնավորությունը, վորին կից վոր
նա կազմակերպված ե: Ակումբի անդամների մեջ պիտի
զարգանա արտադրական՝ միությունական հպարտություն:
Ակումբային բոլոր յելութները, ոկսած խմբակային և
սասսայական աշխատանքից և վերջացրած ֆիզկուտուրա-
յով և սպորտով, պետք ե կատարվեն այն միության ա-
նունից, վորի մեջ բանվորները գտնվում են, և այն ար-
տադրության անունից, վորտեղնրանք աշխատում են: Հիմնա-
կան գծերով ահա այս ե ակումբի քաղաքական-լուավորչական
աշխատանքը: Այստեղ յես կանգ չառա պատի լրագրի և
բանթղթակիցների վրա, վորոնց գերը ակումբի աշխատան-
քի մեջ չափազանց կարեվոր ե և անհրաժեշտ, չշոշափեցիր
նաև բնագիտութան, -տերտերների և կրոնի գեմ ամենա-
լավ ազիտատորի և պրոպագանդիստի, -հարցը, կանգ չառա
սանիտարական պրոպագանդայի և ուրիշ շատ բաների
վրա, վոր ակումբում տարվում են, վորովհետև իմ նպա-
տակն եր կանգ առել միայն ակումբային աշխատանքի
կազմակերպչական և մեթոդական կարեւորագույն հարցերի
վրա:

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԸ
ԴԵՐԵՎԾԹՈՒՅՑԻ Ե,
ԱՎԵԼԻ ՄԵԾ ՈՒ-
ՇԱՐԴՐՈՒԹՅՈՒՆՆ
ԴԵՂԻ ԳՐԴԱՐԱՆԱ-
ՊԵՏԸ, ԱՎԵԼԻ ՄԵԾ

Ակումբային աշխատանքի մեջ
գրադարանն ավելի ու ավելի մեծ
տեղ ե բռնում: Դժբախտաբար այդ
հանգամանքը գեռնես հաշվի չեն առ-
նում մեր ակումբային աշխատա-
գորները և առաջվա նման ուշք չեն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ դարձնում գրադարանի վրա:
Դեղի գիրքը.

Դեռում գրքերի ինվենտարը չափա-
ղանց թույլ է, բացակայում են քաղաքական կամ գիտական
գիտելիքների այս կամ այն ճյուղը. գրքերը կանոնավո-
րապես չեն լրացվում. գրադարաննավետները մեծ մասամբ
դեռ չեն գրավվում ակումբային ընդհանուր աշխատանքի
մեջ, չեն հրավիրվում ակումբի գարշության նիստերին
և ակումբի վարչության կազմի մեջ չեն մտցվում, թե-
կուզ հենց իսորհրդական ձայնով:

Այն ինչ, ակումբն ինչ աշխատանք ել վոր տանելու
լինի, խմբակային, թե մասսայական, միշտել հարց և ծա-
գում այդ աշխատանքները գրքերով և ձեռնարկներով
կանոնավորապես մատակարարելու մասին: Հետագայում,
տվյալ հարցը բանվորական լայն մասսաների հետ խորա-
բացրած ձեռվ մշակելու դեպքում ել գրադարանը պիտի
մասնակցի: Գիրքն հարկավոր ե վոչ միայն ղեկավարին,
այլ և մասսավիկ-բանվորին, ակումբի անդամին, վորն
աշխատում ե այս կամ այն խմբակում կամ լսել ե այս
կամ այն ղեկուցումը կամ դասախոսությունը: Հարկավոր
գրքերի բացակայությունն առանձնապես զգացվում ե
կամպանիաներ տանելու կամ այս կամ այն հարցը ավե-
լի խորացած կերպով մշակելու ժամանակ, — որինակ կե-
նինի ուսումնասիրության, բանվորական շարժման պատ-
մության, արհեստական շարժման պատմության ու-
սումնասիրության ժամանակ և այլն: Մանավանդ արհես-
տական շարժման վերաբերյալ միշտ ել բացակայում
ե ամենաանհրաժեշտ գրականությունը կամ կա ամենա-
նըգագագույն քանակությամբ. գրա հետ միասին գրադա-
րաննավետները պրոֆ. գիտելիքների կողմից բոլորովին
բորիկ, անգրագետ մարդիկ են:

Նույնը կարելի ե ասել և արտադրական լուսավորու-
թյան մասին: Զկա համապատասխան ընտրություն տեխ-

Նիքական և հանրամատչելի գիտական գրականության, չկա գրականություն աշխատանքի գիտական կազմակերպման հարցերի վերաբերմամբ, բնագիտության, ելեքտրոտեխնիքայի, ֆիզիկայի հարցերի վերաբերմամբ և այլն:

Հետագայում գրադարանի վրա մեծ ուշադրություն պիտի դարձվի, և նրա աշխատանքը պիտի կապվի ակումբայի ամբողջ աշխատանքների և ակումբային բոլոր ձեռնարկությունների հետ. իսկ այս տեղից ել բդիմում ե, վոր գրադարանապետները պետք ե համապատասխան պատրաստականություն ունենան և պիտի կարողանան վոչ միայն գիրք դուրս տալ և գրել մատյանում, այլ և դեկավարել ընթերցողին:

ՇԵՖՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎՐԱ

Գյուղի շեֆության հարցը դեռ ևս բավականաչափ չի մշակված: Շեֆական աշխատանքներին մասնակցելու համար, ակումբի համար չկա համապատասխան կայուն ձև, բայց գյուղի հետ կապ պահպանելու ստուգված լավագույն ձևերի մի փոքր պրակտիկա այնուամենանիվ կա, և այդ պրակտիկան ասում ե, վոր ակումբը շեֆական գործում մեծ դեր կարող ե խաղալ:

Շեֆական հանձնաժողովի միջոցով ակումբը վոչ միայն կարող ե յենթաշեֆ գլուխ ուղարկել իր խմբակը, դասախոսին կամ զեկուցողին, Փիզիկուլտի խմբակ կազմակերպողին, պիոներների խմբին, պատի լրագիր և այլն, այլ և կարող ե ելական ոգնություն ցույց տալ գյուղի խրճիթ-ընթերցարանին, ուղարկելով իր ակմբային գրադարանից կամ հատուկ շարժական գրադարանի միջոցով գրքեր և լրագրեր: Մանավանդ մեծ դեր կարող ե խաղալ շարժական գրադարանը: Գործարանային գրադարանին կից յեղած այդ շարժական գրադարանը, վոր սպասարկում ե բանվորական հանրակացարանները, արհեստանոցները, ու համքարությունները, լրացվելով

գյուղական հարցերին նվիրված գրքերով կարող ե հաջողությամբ ուղարկվել և յենթաշեֆ գյուղը:

Ակումբային աշխատանքի ծրագրի մեջ անհրաժեշտ ե մտցնել գյուղում տարվելիք շեֆական կուլտ. կրթական աշխատանքի հարցը և կապվել խրճիթ-ընթերցարանի հետ, յեթե այդպիսին յենթաշեֆ գյուղում կա:

Ակումբում անհրաժեշտ ե կազմակերպել գյուղական հարցեր ուսումնասիրող խմբակներ, անհրաժեշտ ե առանձին ուշադրություն դարձնել արձակուրդ գնացողների վրա, վորոնց պետք ե նախքան արձակուրդ ուղարկելը անցկացնել հողալին որենքները, կոոպերացիան, հրղեհից և անասունների մահացումից ապահովագրելու հարցերն ուսումնասիրող խմբակներով և այլն:

Ակումբային խորհրդակցություններում անհրաժեշտ ե դնել գյուղի շեֆության հարցերը, նախորոք դևանքակելով ակումբի վարչությունների մեջ:

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Ակումբային աշխատանքներ տանող բոլոր կազմակերպությունների, այն և արհեստական միությունների, և կոմյերքումիության, բանակի և բաղկացարների ամբողջ ակումբային աշխատանքը համարադարձային և նահանգական մասշտաբով համաձայնեցնելու համար կուսկոմներին (նահանգ, կոմիտեներին ու յակոմներին) կից կազմակերպում են ակումբային հանձնաժողովներ, բաղկացած վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներից, վորտեղ և լուծվում են ընդհանուր ակումբային ցանցի և ընդհանուր ակումբային պլանի հարցերը:

Հանձնաժողովի խնդիրն ե՝ կապել միմիանց ակումբային աշխատանքի առանձին առանձին ծրագրերը:

Ակումբային հանձնաժողովների այլպիսի կազմակերպությունները հնարավորություն կտան իսկապես շաղկա-

պելու աշխատանքը և խուսափելու արհեստակցական միությունների և քաղլուսվարների միջև առաջացող անհարթություններից։ Այդպիսի հանձնաժողովներ լինելու դեպքում, քաղլուսվարների դերը, իբրև ակումբային մեթոդական աշխատանքները դեկավորող մարմինների՝ վերանում է, և այդ դերն անցնում է ակումբային հանձնաժողովին։ Պրակտիկան ցույց տվեց, վոր ակումբային հանձնաժողովներ կազմակերպելու այս ձևը, վորի նախագահը հանդիսանում է կուսկոմի ագիտազրոպրաժնի վարիչը, շատ բարերար ազդեցություն է թողել ակումբային աշխատանքի ընդհանուր վիճակի վրա և նպաստել է, վոր ամբողջ գծով աշխատանքը կենդանություն ստանաթե կազմակերպչական և թե մեթոդական, բայց առանձին դեպքերում նկատվում է ակումբային հանձնաժողովների խնդիրների սինալը մբռնում։ Այսպես որ, յերթեմ ակումբային հանձնաժողոմները պահանջում են առանձին ակումբներից, վոր նրանք իրենց ծրագրը ուղարկեն հաստատելու համար, խառնվում են նրանց անմիջական աշխատանքներին և այլն։ Բոլոր այդ անկանոնություններին պիտի վերջ տալ տեղերում, վորովհետեւ դրանք կասեցնում են ակումբային աշխատանքի զարգացումը։

Ակումբային հանձնաժողովների կազմակերպումը ասիթ յեղափ, վոր կազմակերպվեն տեղերում նաև կուկութիվներ, վորոնց վրա և նենվելու յեն ակումբային հանձնաժողովները։

ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԿԻՑ ԿՈՒՍԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ակուբին կից ունենալ կուսկուկութիվ նշանակում է կազմակերպել ակումբի բոլոր անդամ կոմունիստներին։ Կուսկուկութիվներ կազմակերպելու առաջարեցում դեռ շատ քիչ փորձառություն ունենք, բայց պրակտիկան ցույց

տվեց, վոր վորոշ տեղեր այդ հարցին սխալ են մոտենում, և այդ սխալը հենց սկզբից պետք է ուղղել։ Կուսկուկութիվը դա ակումբի անդամ բոլոր կոմունիստների կազմակերպությունն է։ Այն ինչ, կուսկուկութիվը յերթեմ ստեղծվում է բջիջի վորոշումով՝ կուսկուկութիվի մեջ մտցնելով տվյալ ձեռնարկության բոլոր անդամներին, նույն իսկ յեթե կուսակցության այս կամ այն անդամը ակումբին անդամ չե և ակումբում ակտիվ աշխատանք չի տանում,

Այդպես չպետք է լինի, վորովհետեւ այդպիսի կուկութիվը մնում է միայն թղթի վրա և կոչ մի նշանակություն չունի։ Կուսկուկութիվի նպատակն ե—ակուսբային ակտիվ աշխատանքի բանել ակումբում գտնված բոլոր կուսակցականներին, ակումբ գրավել կուսակցության նոր անդամների, կենդանացնել աշխատանքը և վոր գլխավորն ե ոգնել անկուսակցական բանվորական մասսայի կազմակերպման գործում և յերեան բերել յուր ակտիվությունը, նույնպես և ոգնել ակումբի վարչությանը անցկացնելու կուլտ կրթական այս կամ այն ձեռք առնված միջոցները։

Կուսկուկութիվներ կազմակերպելիս ինչ սխաներ կարող են տեղի ունենալ, վորոնցից անհրաժեշտ ե խուսափել, նախ և առաջ հնարավոր ե, վոր ակումբային մասսայի ակտիվությունը փոխարինվի իրեն, կուկութիվի աշխատանքով և վարչության աշխատանքը փոխարինվի կուսկուկութիվի բյուրոյի աշխատանքով։

Այդ սխալի գեպքում կուսկուկութիվ ստեղծելու ամբողջ նպատակն ու նշանակությունը կորչում է։ Կուսկուկութիվի նպատակն ե—դեկավորել յեկազմական միջոցն կուսակցական ազդեցություն գործել նամապատասխան անկուսակցական կազմակերպությունների մեջ։

Վորոպեսպի ակումբային աշխատանքն իսկապես կեն-

դանացնել և կուսկողեկտիվի աշխատանքից ստանալ առավելագույն եֆֆեկտ, վերջինս իր աշխատանքը հենց սկզբեց պիտի կառուցի պահպանելով հետևյալ պայմանները. կուսկոլեկտիվն իր բօլոր վորումները անց է կացնում բացառապես ակումբի վարչության Քրոկցիայի միջոցով, վորը եր հերթին, իր վորոշումները անց ե կացնում ամբողջ ակումբային վարչության միջոցով: Կուսկոլեկտիվի Քրակցիայի բյուրոն կաւսկոլեկտիվի բներդումինքնի, այլ իրենից ներկայացնելու յե վարչության Քրակցիան. Կարևոր ե, վոր կուսկողեկտիվի ժողովներում ակումբային աշխատանքի ամբողջ պահնը չմշակվի: Այս ծրագրների մշակումը պետք է անցնի Քրակցիայի բյուրոյով, իսկ հետո ակումբի բոլոր անդամների ընդհանուր ժողովներում ընդունվում է միասին:

Կուսկովելատիվսերի մեջ ըստ հնարարավորության շատ կուսակցականներ գրավելով, անհրաժեշտ ե նրանց հանձնել ակումբային աշխատանքներ, աշխատելով կուսակցականներին մեխանիկորեն այս կամ այն խմբակներում շատղավորել, այլ նրանց մեջ ընտրություն կատարել և ուղարկել այն աշխատանքին, վօրով նրանք հետաքրքրվում են, Այսպիսի մոտեցումով ակումբում կայաց կամաց կծոկնվեն կուսակցական կուլտուրնիկներ, վորոնք հետագայում ել ակտիվ կերպով կաշխատեն թե ակումբում, թե գործարկութերին կից կուլտուրնաժողովներում և ակումբային ընդհանուր անկուսակցական մասսայի մեջ կը կազմեն մի ամուր կորիգ:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ազելի լազն կեր- Մոտակա տարիներում ակումբա-
ՊՈՎ ԾԱՎԱԼԵՑԵՔ յին աշխատանքը լայն կերպով ծա-
ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇ գալիքեռ յե:
ԽԱՏԱՆՔԸ ԻՆՉՎես տեսանք, ակումբը

շնորհիվ այն հանգամանքի, վոր դեռ ևս աշխատանքը բար-
պականաչափ լայն կերպով չիդրված, շնորհիվ ինքնազմու-
ծունեցության և նախաձեռնության բացակայության,
ինչպես և զբանական սիջոցների պակասության և այլն,
—ակտիվ աշխատանքի մեջ զբագլում եւ միջին հաշվով վոչ
ավելի, քան բոլոր բանագործների $15-20\%$ ը. (մի տարի
տառաջ նա զբագլում էր 6% ը.):

Ակումբի նպատակն եւ գրավել նաև . մնացած 80° ըլք:
Դրա համար կը պահանջվեն յերկար տարիներ, շատ ուժի
և յեռանդ: Բայց բանվորների մեծամասնությունն ու-
նըանց ընտանիքներին սպասարկելու խնդիրը ներկայու-
մքս եւ կարելի յէ բավարար չափով լուծել, յեթե միայն
տեղերում այդ աշխատանքին լծվեն բանվոր դասակար-
գին հատուկ ամբողջ յեռանդով: Ակումբային աշխատանք-
ների թերությունները, վոր մենք ցույց տվինք, ուշա-
գրության պիտի առնվեն տեղերում և ակումբային ծրա-
գըերը քննության առնելու ժամանակ, և այդ թերու-
թյունները կտրուկ կերպով պիտի գերացվեն և պիտի
գծվեն մասսայական աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ:

Այսումբային աշխատանքը կենդանացնուու էր ամենալիսավոր դերը կը խաղան ակուք սիս վարչութեաները, բավականաչափ նախապատրաստված ակն մբային ակտիվը և ճիշտ կազմակերպած կաւելով կավե-
րը:

Այսպեսով մոտակա խնդիրը, վոր զրված ե արհա-
տակցական միությունների առաջ, այն ե, վոր ակումբ-
ներն հարկավոր ե ուժեղացնել ակտիվ աշխատավորներով
(նախապատրաստելով նըանց ակումբային աշխատավոր-
ների գասընթացք կոնֆերենցիաներում) և ոգնելու, վոր
բոլոր ուժերով ծափակի ակումբային ժամանական աշխա-
տանքը՝ զարքեցնելով ներք իրենց անկուսացական
բանվորական մասսայի ակտիվությունն ու նախաձեռ-
նությունը:

Միմիայն դեպի ակումբային աշխատանքն ունեցած արգիսի մտածումով, ակումբներն իսկապես կը դառնան կհնարն կոմունիստական ղաստիարակության և իսելացի հանգստի ուժանցի վայր, վարոնց միջոցով արհեստակցական միությունները կը կարողանան իրենց շուրջը համաշխատ բանվորական մասամբներին:

Այդ բանվորական մասամբներն ամքողջովին կը ընդառն կուսակցություն և արհեստակցական միության բոլոր քաղաքական-լուսավորչական և կուլտուրական ձեռնարկություններին, վարովնետե բանվորներն զգուժ են իրենց զիտելիքների անբավարարությունը և ձգտուժ են դեպի այն առենը, ինչ վոր կարող ե լրացնել նրանց զիտելիքների պակասը:

Լենինը գեռ ևս 1918 թ. արձանագրել է բանվորների այդ ձգտուժը դեպի զիտությունը և լուսավորության համառուսական Ս իս համագումարում իր արտասանուծ ճառի մեջ առել եւ:

«Աշխատավառները ձագում են դեպի զիտությունը, նոր ինտել այն երանց հարկավոր և հաղթանակի համար. Աշխատավար մասսայի իննը տասերորդ մասը ընթանի ե, վոր զիտությունը հանդիսանում ե մի զուծի իրենց ազատագրական պայքարում, վոր իրենց անհաջողությունները բացառվում են կրության պակասությամբ յեւ վոր այժմ իրենցից ե կախված դաշնելու լուսավառությունը իսկապես մաշելի բոլորին. Մեր գործն ազանված ե Երանով, վոր մասսաներն իրեն ձեռք զարկեցին նոր սոցիալիստական Խուսասանի շինաւորթյանը. Երանք սովորում են իրենց սեփական փառով, իրենց անհաջողությունների յեւ սխալների վրա, նեանք տեսնում են, թե վորքան անհրաժեշտ ե լուսավորությունը իրենց մղած կոիվը հաղթանակավ վերջացնելու համար:

Մեր, ակումբային աշխատավորներիս գործն ե՝ ոգնել բանվորական մասսային ստանալու իրեն անհրաժեշտ գիտելիքները, ոգնել բարձրացնելու իր կուլտուրական մակարդակը և ղաստիարակել կոմունիստական հասարակության համար մարտնչողների նոր կազրեր:

18. — «Յերեք Ենուելնացիոնալ» թմուշ
ցհնիբովկա (սպառված) . . . » — 5 կ.
19. ԳիրինիԱ. — Ի՞՞նչ և արհեստակցական արտադրական
միությունը » — 30 կ.
20. Վեցնեվեցեցի. — «Աշխատանքի հաշմանդամ-
ների ամրանովազբումը» . . . » — 20 կ.
21. — Դփորձարտեղկոմների կուլտ.հանձ-
նաժողովների կանոնադրություն » — 5 կ.
22. — Ակումբների, «Կարմիր անկյունների» և Փիգ-
կուլտի խմբակների կանոնադրություն » — 25 կ.
23. Սենօթիշեկին. — Ակումբային աշխատանքի խնդիրները 30 կ.
24. ՏՈՄՄԿԻ. — Արհարժման հերթական խնդիրները (ժամուլի
տուկ հ)

ՊԼԱԿԱՏՆԵՐ

1. «Բարձրացրու աշխատ. արտակրողականությունը» Գիւը 15 կ.
2. «Վերաշինենք մեր յերկիրը» (5 գույն) » 15 »
3. «Կարգա միության վոտ անդամի մասին» » 15 »
4. «Ացա զանովագության մասին (4 գույն) » 15 »
5. Բատրակ. լսիր կենիսին » 15 »
6. Ի՞նչ և պրոֆեսիոնթյան անդամատումաը » 15 »
7. Կառուցող բանվոր, հեշիք (կրկնակի) » 30 »

Դիմել՝ Յերեվան, ՀԱՅԻ սենյակ № 5
Աдрес: Էրևան, Ը. Պ. Ս. Արմենիս, հոն. № 5



53.016

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.